ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Սփլեշ Ուոթեր ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	Նոյ	Աղբյուրի բնական խմելու ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, այն է՝ ենթարկված կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրման, ախտահանված է ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ օրենքի 8-րդ հոդվածի, սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգը ISO22000 ստանդարտի պահանջներին համապատասխան սերտիֆիկացված է, որը մասնակիցը կներկայացնի պայմանագրի կատարման փուլում: Շշալցված է նվազագույնը 18.9լ տարողությամբ պլաստիկ և կենցաղային օգտագործման համար նախատեսված թափանցիկ տարաներով, որոնք ունեն տաք և սառը ջրի սարքին միանալու հնարավորություն, (ընդհանուր քանակությունը՝ 900 հատ կամ 17 010 լիտր): Մաքրման արդյունքում ջուրը պահում է իր բնական հանքային բաղադրությունը: Մատակարարը պարտավոր է պայմանագրի կնքման պահից և դրա գործողության ողջ ժամկետում Պատվիրատուի անհատույց օգտագործմանը հանձնել ոչ պակաս քան 6 հատ ջրի սարք (դիսպենսեր): Նախքան ֆիլտրումը իրականացվում է ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը կատարվում է ամեն օր՝ հետադարձ լվացման մեթոդով: Մատակարարումներն

		իրականացվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում, նվազագույնը ամսեկան երկու անգամ: քանակը՝ ըստ Պատվիրատուի ներկայացրած պահանջարկի: Պիտանելիության ժամկետը՝ մատակարարման պահից նվազագույնը 6 ամիս: Ապրանքի բեռնումը և բեռնափումը պետք է իրականացվի Մատակարարի ուժերով և միջոցներով

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «Сплэш Уотер» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-23/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	товарный знак	технические характеристики
1	-	-